

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցանկացած երկրում կառավարության դրամական հոսքերի արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը դրամական հոսքերի իրատեսական և օպերատիվ կանխատեսումներ ապահովելն է:

Եթե կառավարությունն ի վիճակի չէ ճշգրիտ կերպով կանխատեսել իր ապագա դրամական հոսքերը, ապա ստիպված է իր տարբեր հաշիվներին կամ միասնական հաշվին պահել մեծ գումարներ՝ իր ծախսերը և այլ պարտավորությունները ժամանակին կատարելու համար: Այդ պայմաններում պետությունը չի կարողանում իր ազատ միջոցներից առավելագույն եկամտաբերություն ապահովել, մյուս կողմից էլ հաճախ շուկայական պայմաններով փոխառություններ է ներգրավում՝ իր հաշիվներին որոշակի գումարներ պահելու նպատակով:

Դրամական հոսքերի ճշգրիտ կերպով կանխատեսելու անընդունակության հետևանքով կառավարության հաշիվների մնացորդները կարող են մեծ չափով տատանվել, որի հետևանքով տատանվում են նաև առևտրային բանկերի պահուստները կամ իրացվելիությունը: Հետևաբար, դրամական հոսքերի ճշգրիտ և պարբերական կանխատեսումները դրամական հոսքերի արդյունավետ կառավարման կարևոր բաղադրիչներից են:

Պետք է նկատի ունենալ, որ դրամական հոսքերի կանխատեսման բարելավման միջազգային փորձն այնքան էլ հարուստ չէ: Որպես կանոն կանխատեսումները հիմնվում են պատմական օրինակների, կանխատեսողների փորձի և ինֆորմացիոն աղբյուրների համադրության վրա¹:

Զարգացած երկրներում ամենաքիչը երեք ամսվա կտրվածքով կազմվում են օրական դրամական հոսքերի կառավարման ծրագրեր և սրանք վերանայվում են շատ հաճախակի: Օրինակ, Ֆրանսիայում կազմվում են օրական հոսքերի կանխատեսումներ առաջիկա մեկ տարվա համար²: Ոչ այնքան զարգացած երկրներում ընդունված է տասնօրյա կամ շաբաթական ծրագրերի կազմումը:

Հայաստանի Հանրապետությունում պետության դրամական միջոցների կառավարումը է գանձապետարանի խնդիրն է: «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի (դ) և (ե) կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքների դրամական միջոցների կառավարման նպատակով գանձապետարանն ապահովում է.

- դրամական հոսքերի կառավարման եռամսյակային, ամսական, շաբաթական և օրական ծրագրերի կազմումը,
- դրամական հոսքերի կառավարման ծրագրերի փաստացի կատարման վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը և հաջորդ ժամանակահատվածի ծրագրերում համապատասխան ճշգրտումների կատարումը:

Բանի որ Հայաստանի Հանրապետությանը և համայնքներին ամրագրված դրամական միջոցները մուտքագրվում են գանձապետական միասնական հաշվին, և բոլոր վճարումները կատարվում են այդ հաշվից³, ուստի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմվող դրամական հոսքերի կանխատեսումներն ըստ էության իրենցից ներկայացնում են գանձապետական միասնական հաշվի հոսքերի ծրագրեր: Վերջինս կազմված է 4 մասից.

1. գանձապետական միասնական հաշվի մուտքեր,
2. գանձապետական միասնական հաշվի ելքեր,
3. պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ,

¹ Mike Williams, Government cash management good-and bad-practice, IMF September 2004, p. 27.

² "Government Cash Management, Good-And Bad-Practice" Mike Williams, September 2004, page 27 http://www.mjw.net/cac_gov_cash.html.

³ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված է Ազգային ժողովի կողմից 2001թ. հուլիսի 27-ին:

4. կառավարության նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի պարտավորություններ: Գանձապետական միասնական հաշվի մուտքերը և ելքերը դասակարգվում են ըստ գանձապետական միասնական հաշվի ենթահաշիվների.

- պետական բյուջեի մուտքեր և ելքեր,
- համայնքների բյուջեների մուտքեր և ելքեր,
- արտաբյուջետային հաշիվների մուտքեր և ելքեր,
- դեպոզիտային հաշիվների մուտքեր և ելքեր,
- մոնետիզացիոն հաշիվների մուտքեր և ելքեր,
- մինչև 2008թ. սոցիալական ապահովության պետական հիմնադրամի մուտքեր և ելքեր:

Քանի որ գանձապետական միասնական հաշվի մուտքերում և ելքերում գերակշռում են պետական բյուջեի հոսքերը, դրամական հոսքերի ծրագրում մանրամասնեցված ներկայացվում են միայն պետական բյուջեի հոսքերը՝ «ՀՀ բյուջետային համակարգի» մասին ՀՀ օրենքի և յուրաքանչյուր տարվա բյուջեի մասին օրենքի դասակարգումների համապատասխան:

Դրամական հոսքերի կանխատեսման ծրագիրն ավարտվում է կառավարության նկատմամբ կենտրոնական բանկի պարտավորությունների կանխատեսմամբ: Վերջինս հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\text{ԿԲ պարտավորություններ} = \text{ԳՄՀ} + \text{դեպոզիտային հաշիվներ} - \text{արժեթղթեր}$$

Բանաձևում ԳՄՀ-ն գանձապետական միասնական հաշվի մնացորդն է, դեպոզիտային հաշիվները՝ միասնական հաշվից բացի պետական մարմինների կողմից կենտրոնական բանկում բացված դեպոզիտային հաշիվների մնացորդը, իսկ արժեթղթերը՝ կենտրոնական բանկի կողմից երկրորդային շուկայում գնված գանձապետական պարտատոմսերի շուկայական արժեքն է:

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս ՀՀ կառավարության նկատմամբ կենտրոնական բանկի պարտավորությունների դինամիկան 2000-2008թթ. տարեվերջի դրությամբ: Ինչպես տեսնում ենք, կառավարության նկատմամբ կենտրոնական բանկի պարտավորությունների գերակշիռ մասը կազմում է գանձապետական միասնական հաշիվը, ինչն, անշուշտ տրամաբանական է: Եթե մինչև 2001թ. պարտավորությունները բացասական նշանով են, ինչը նշանակում է, որ կառավարությունն է պարտք կենտրոնական բանկին, ապա 2002թ. սկսած՝ գանձապետական միասնական հաշվի մնացորդը, հետևաբար նաև, պարտավորությունները, բացառությամբ 2005թ., աճում են բավականին բարձր տեմպերով:

Աղյուսակ 1

ՀՀ կառավարության նկատմամբ կենտրոնական բանկի պարտավորությունների դինամիկան¹

	մլրդ. դրամ									
	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	
ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունները կառավարության նկատմամբ	(8.29)	(8.27)	9.71	31.51	36.85	17.37	57.72	89.77	96.45	
ԳՄՀ մնացորդ	0.82	0.01	8.85	32.28	42.11	21.92	61.27	93.55	93.59	
Արժեթղթեր	(3.30)	(1.35)	(0.74)	(1.05)	(5.89)	(5.57)	(4.02)	(4.54)	(8.39)	
Կառավարության դեպոզիտային հաշիվներ	1.19	1.91	4.29	0.27	0.62	1.02	0.47	0.76	11.26	
ԿԲ-ի պարտքի արժեթղթավորում	(7.00)	(8.84)	(2.70)	-	-	-	-	-	-	

ՀՀ դրամական հոսքերի կանխատեսման հիմքում ընկած են նախորդ տարիների փվային շարքերի ուսումնասիրությունը, տվյալ տարվա համար պետության ֆինանսական ծրագիրը (որը շարադրված է Ազգային ժողովի կողմից ընդունվող պետական բյուջեի մասին օրենքում), կառավարության կողմից սահմանվող պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, դրամական հոսքերի կառավարիչների և գանձապետական

¹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

միասնական հաշվի հոսքերի գործընթացում ներգրավված սուբյեկտների միջև տեղեկատվության փոխանակումը:

Նշենք, որ 2008թ. ընթացքում պետական բյուջեի¹ համախառն հոսքերը (մուտքերի և ելքերի գումարը) կազմել են միասնական հաշվի հոսքերի շուրջ 63%-ը. նշված ցուցանիշի մեծությունը նախորդ տարիներին՝ 2007թ., 2006թ. և 2005թ. համապատասխանաբար կազմել է 53.8%, 82.8% և 76.5%: Ընդ որում, միասնական հաշվի այլ ենթահաշիվների (բոլոր ենթահաշիվները՝ բացի պետական բյուջեից) մեկանգամյա խոշոր հոսքերը շատ հաճախ հանդիսանում են ներքին հոսքեր պետական բյուջեի հետ, այսինքն, գանձապետական միասնական հաշվի ենթահաշիվից գումարները փոխանցվում են պետական բյուջեի հաշվին: Դա նշանակում է, որ գանձապետական միասնական հաշվի հոսքերը կանխատեսելիս առանձնահատուկ նշանակություն ունեն պետական բյուջեի հոսքերի կանխատեսումները:

Պետական բյուջեի կարճաժամկետ հոսքերը կանխատեսելու համար, բնականաբար, պետք է հիմնվել տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքի ցուցանիշների վրա, որը հանդիսանում է պետության տարեկան ֆինանսական ծրագիրը: Այդ իմաստով դրամական հոսքերի կանխատեսումների որակը, հետևաբար նաև դրամական հոսքերի կառավարման արդյունավետությունը մեծ չափով կախված է տարեկան բյուջեների իրատեսական լինելուց:

Աղյուսակ 2-ում արտացոլված են 2004-2008թթ. պետական բյուջեի հիմնական ցուցանիշների կատարողականները: Մասնավորապես, 2008թ. պետական բյուջեի փաստացի եկամուտները ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատված սկզբնական ծրագրի նկատմամբ շեղվել են 7.6%-ով, իսկ ընդամենը ծախսերը՝ 2.1%-ով: Ծախսերի փաստացի ցուցանիշների տարբերությունը սկզբնական ծրագրերից զգալի է, երբ դրանք դիտարկում ենք ըստ տնտեսագիտական դասակարգման խոշոր խմբերի՝ ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների: Սկզբնական ծրագրի նկատմամբ հարկային եկամուտների կատարողականը կազմում է 104%. հարկային եկամուտները կազմում են պետական բյուջեի եկամուտների ավելի քան 80%-ը, ուստի դրանց կանխատեսման կարևորությունը ստանում է առանձնահատուկ նշանակություն:

Նշենք, որ, օրինակ, պետական բյուջեի ծախսերի 2008թ. փաստացի ցուցանիշը պակաս է ճշգրտված ծրագրից 19.3 մլրդ դրամով կամ միջին ամսական 1.6 մլրդ դրամով: Եթե նույնիսկ դրամական հոսքերի կառավարիչները որոշակի պահի դրությամբ լավագույնս համախմբեն տեղեկատվական հոսքերը և պետական բյուջեի ամսական ծախսերի ցուցանիշները կանխատեսեն 100% ճշգրտությամբ, տվյալ ժամանակահատվածի համար մշտապես առկա է պետական բյուջեի ամսական ծախսերի շեղումների ռիսկ միջինում 1.6 մլրդ դրամով, քանի որ պետական բյուջեն ծախսող միավորներին այդ չափով ծախս կատարելու լիազորություն տրված է, և վերջիններին ցանկացած պահի ոչինչ չի կարող արգելել օգտվել օրենսդրությամբ իրենց տրված լիազորությունից:

Հիմնվելով աղյուսակ 2-ի տվյալների վրա՝ կարելի է արձանագրել, որ դիտարկված 5 տարիների ընթացքում պետական բյուջեի սկզբնական ծրագրերը միշտ կազմվել են հարկային եկամուտների պոտենցիալը զգալիորեն թերագնահատելով: Սա կարելի է համարել օրինաչափություն և ընդունել որպես հիմք՝ մնացած հավասար պայմաններում, տարվա սկզբին ողջ տարվա համար կատարվող կանխատեսումների համար: Մասնավորապես 2004-2008թթ. պետական բյուջեի հարկային եկամուտների միջին կատարողականը սկզբնական ծրագրի համեմատ կազմել է 105.5%՝ տատանվելով 103.7-110.2% միջակայքում:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի ծախսերին, ապա 2004-2008թթ. սկզբնական ծրագրի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի փաստացի ցուցանիշի կատարողականը կազմել է 107-111%: ՀՀ պետական բյուջեի ծախսերի գերակշիռ մասը կազմում են ընթացիկ ծախսերը, որոնց փաստացի մեծությունը սկզբնական ծրագրի նկատմամբ ուսումնասիրված ժամանակահատվածում բավականին բարձր է եղել՝ պայմանավորելով նույն կարգի մեծ կատարողականներ ընդամենը ծախսերի գծով:

¹ Պետական բյուջեի հոսքերի կանխատեսումներում չեն ներառվում այն դրամաշնորհային և վարկային միջոցների ստացումը և դրանց հաշվին կատարվող ծախսերը, որոնք կապակցված են որոշակի ծրագրերի և իրականացվում են ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ) միջոցով:

Այսպիսով, կարելի է պնդել, որ ուսումնասիրված ժամանակահատվածում պետական բյուջեի ծրագրային ցուցանիշները աչքի չեն ընկել մեծ իրատեսությամբ: Դա նշանակում է, որ դրամական հոսքերի կառավարիչներից պահանջվում է մեծ զգոնություն՝ տարվա ընթացքում անընդհատ տեղեկատվական հոսքերի կենտրոնում գտնվելու և դրամական հոսքերի ծրագրերը պարբերաբար թարմացնելու նպատակով:

Աղյուսակ 2

2004-2008թթ. պետական բյուջեի ցուցանիշների կատարողականները
(առանց ԾԻԳ-երով շրջանառվող միջոցների)¹

Տարեթիվ	2004		2005		2006		2007		2008 ²	
	1	2	1	2	1	2	1	2	1	2
Կատարողական ³										
Պետական բյուջեի եկամուտներ	110.1	103.2	108.9	100.2	114.3	103.9	118.2	105.4	107.6	100.1
Հարկեր և տուրքեր	103.9	102.6	103.7	100.0	105.7	101.2	110.2	103.4	104.0	100.2
Պետական բյուջեի ծախսեր	109.8	99.9	110.5	98.0	107.0	98.0	111.0	96.8	102.1	97..5
Ընթացիկ ծախսեր	108.3	100.7	112.6	98.8	106.1	98.4	103.9	97.0	110.5	98.3

Դրամական հոսքերի կանխատեսումների մյուս հիմքը՝ կառավարության կողմից սահմանվող պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները, նույնպես աչքի են ընկնում անորոշությամբ և չեն կարող իրատեսական հիմք հանդիսանալ դրամական հոսքերի ծրագրավորման ժամանակ: Հատկապես մեծ են շեղումները ծախսերի կատարողականների մասով: Ուսումնասիրված ժամանակահատվածում՝ 2004-2008թթ. բոլոր տարիներին առաջին եռամսյակում ծախսերը մեծ չափով պակաս են ֆինանսավորվել եռամսյակային համամասնությամբ նախատեսվածից: Դիշտ է, առաջին եռամսյակի համար դրամական հոսքերի կանխատեսումներ իրականացնելիս կարելի է հաշվի առնել նախորդ տարիների եռամսյակային համամասնությունների կատարողականները, սակայն շեղումների չափերը ըստ տարիների կարող են տարբեր լինել և այդպես էլ լինում է, քանի որ ծախսող բազմաթիվ միավորները ըստ տարիների կարող են տարբեր կերպ գերազանցատել առաջին եռամսյակում իրենց ֆինանսավորման կարիքը: Նույն միտումները շարունակվել են առաջին կիսամյակի արդյունքներով. թեև ծախսերի կատարողականները բարելավվել են առաջին եռամսյակի համեմատությամբ, սակայն բացարձակ գումարով շեղումները մեծացել են: Կիսամյակի առումով ևս եկամուտների կատարման մեծ խնդիրներ չկան, հարկերի ծրագրավորման ժամանակ ցուցաբերվել է զգուշավոր մոտեցում, և բավականին մեծ են շեղումները պաշտոնական տրանսֆերտների գծով:

Ինն ամսվա արդյունքներով շարունակվել են պահպանվել բյուջեի ծրագրերի կատարման նույն միտումները, ինչ որ առկա էին տարվա առաջին կեսին: Հարաբերական ցուցանիշները ինն ամսվա կտրվածքով բարելավվել են, սակայն շարունակել են բացարձակ թվերով տարբերվել ծրագրերից: Խոսքը հատկապես վերաբերում է պետական բյուջեի ծախսերին, որոնք պակաս են եղել նախատեսվածից և՛ ընթացիկ ծախսերի, և՛ կապիտալ ծախսերի մասով:

Այսպիսով, ինչպես տարեկան բյուջեի մասին օրենքով, այնպես էլ կառավարության սահմանած եռամսյակային համամասնություններով ծրագրավորված ցուցանիշները փաստացի կատարման արդյունքում մեծ չափով շեղվում են նախատեսվածից: Դա նշանակում է, որ դրամական հոսքերի նույնիսկ եռամսյակային կամ տարեկան ծրագրեր կազմելու համար միայն տվյալ տարվա բյուջեի մասին օրենքը կամ եռամսյակային համամասնությունները բավարար աղբյուր չեն դրամական հոսքերի կառավարիչի համար: Հետևաբար, ամսական, տասնօրյակային կամ օրական կանխիկ հոսքերի կանխատեսումները ևս պետք է իրականացվեն՝ հաշվի առնելով տարեկան բյուջեի մասին օրենքի և կառավարության սահմանած բյուջեների եռամսյակային համամասնությունների շեղումների հավանականությունը:

¹ Աղբյուրը՝ 2004-2008թթ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություններ:

² 2008թ. պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարիների հետ՝ կապված բյուջետային դասակարգումների փոփոխության հետ:

³ Կատարողականի տողում համապատասխանաբար տվյալ տարվա 1-ին սյունը ցույց է տալիս կատարողականը սկզբնական պլանի նկատմամբ, իսկ 2-րդ սյունը՝ կատարողականը ճշտված պլանի նկատմամբ:

Դրամական հոսքերի կառավարման առումով իդեալական իրավիճակ կլինի, եթե միասնական հաշվի մուտքերն ու ելքերը հավասարաչափ կամ առավելագույնս հարթ բաշխված լինեն ժամանակի մեջ: Բնականաբար, պրակտիկայում հնարավոր չէ, որ միջոցները հավասարաչափ ստացվեն յուրաքանչյուր օր, ուստի, ցանկալի է ունենալ հնարավորինս մեծ հատակություն և հնարավորինս մեծ ժամկետների համար, թե երբ և ինչ չափի գումարներ կմուտքագրվեն զանձապետական միասնական հաշվին և կելքագրվեն հաշվից: Ընդ որում, մուտքերի մասում խոսքը վերաբերում է հատկապես պետական բյուջեի հարկային եկամուտներին, քանի որ սրանք են հանդիսանում զանձապետական միասնական հաշվի մուտքերի ծավալային առումով ամենահիմնական և մշտական աղբյուրը:

Նախորդ տարիներին հավաքվող հարկային եկամուտների օրինաչափությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ և՛ երկրի ներսում, և՛ սահմանին հավաքվող եկամուտների կեսից ավելին հավաքվում է ամսվա վերջին տասնօրյակում: Ընդ որում, երկրի ներսում հավաքվող եկամուտների տեսակարար կշիռներն աճում են ըստ ամսվա տասնօրյակների: Մահմանի վրա հավաքվող եկամուտները ավելի շատ են տատանվում ըստ ամսվա տասնօրյակների, և դրանց բաշխումը ամսվա մեջ դժվար է կանխատեսել:

Պետական բյուջեի ամսական ծախսերի մասնաբաժիններին նույնպես բնորոշ է ոչ հարթ բաշխվածությունը, ընդ որում, պետական բյուջեի ամսական ծախսերի տեսակարար կշիռների վարիացիան 2004-2008թթ. բավականին մեծ է՝ մինչև 3 տոկոսային կետ, որը 2008թ. ընդամենը ծախսերի կտրվածքով կարող է շեղել ամսվա ծախսերի կանխատեսումը մոտ 23 մլրդ դրամով, ինչը բավականին մեծ ցուցանիշ է: Ինչ վերաբերում է ամսվա մեջ պետական բյուջեի ծախսերի կատարմանը, ապա ծախսերի որոշ բաղադրիչներ ունեն կատարման մեծ որոշակիություն, իսկ մի զգալի մաս էլ՝ հատկապես ապրանքների և ծառայությունների գնման և ոչ ֆինանսական ակտիվների գնման ծախսերը, ամսվա մեջ կատարման որևէ օրինաչափության չեն ենթարկվում, և սրանց տասնօրյակային կամ շաբաթական կանխատեսման համար նախորդ ժամանակահատվածի օրինաչափությունների ուսումնասիրությունը չի պարունակում որևէ օգտակար տեղեկություն:

Այսպիսով, դրամական հոսքերի արդյունավետ՝ նվազագույն շեղումներով կանխատեսումներ իրականացնելու համար տեղեկատվական հոսքերի ներգրավումն անհրաժեշտ պայման է:

2004 թվականի օգոստոսի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «ՀՀ գործադիր իշխանության որոշ մարմինների և ՀՀ կենտրոնական բանկի միջև տեղեկատվություն փոխանակելու մասին» թիվ 1354-Ն որոշումը: Նշված որոշմամբ՝ ՀՀ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության համակարգման արդյունավետությունը բարձրացնելու և բանկային համակարգի ֆինանսական հոսքերի կառավարումը բարելավելու նպատակով ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային կոմիտեի¹ միջև փոխանակվող տեղեկատվության ցանկերը: Մասնավորապես, ըստ վերը նշված որոշման, հարկային ծառայությունը և մաքսային կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանը պետք է տրամադրեն հետևյալ տեղեկատվությունը.

Աղյուսակ 3

Անվանում	Պարբերականություն	Ժամկետ
Հարկային եկամուտների կանխատեսում՝ մեկ թվով	ամսական՝ շաբաթական բաշխվածությամբ	մինչև կանխատեսվող ամսվան նախորդող ամսվա 25-ը
Հարկային մուտքերի կանխատեսումներ ըստ հարկատեսակների	ամսական	մնաց կանխատեսումները սկսելու պահից
Հարկային եկամուտների ամսական ծրագրային և փաստացի ցուցանիշների շեղումների բացատրություն	ամսական	ամսվա ավարտից հետո 2 շաբաթվա ընթացքում

¹ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ծառայությունը և մաքսային կոմիտեն ներկայումս միավորվել են մեկ գերատեսչությունում՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում:


Ցավոք, պետք է արձանագրել, որ տեղեկատվության փոխանակման վերը նշված հոսքերը գործնականում այնքան էլ լիարժեք տեղի չեն ունենում, և հարկային մարմնի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող ամսական ցուցանիշների կանխատեսումները իրենցից ներկայացնում են եռամսյակային համամասնությամբ սահմանված ցուցանիշների բաշխում ամիսների միջև, որը չի ներառում եռամսյակային համամասնություններից սպասվող շեղումները:

Ինչպես ցույց են տալիս ՀՀ դրամական հոսքերի կանխատեսումների համակարգի ուսումնասիրությունները, բնագավառում առկա են մի շարք հիմնախնդիրներ. դրամական հոսքերի բաշխվածությունը ժամանակի մեջ անհարթ է և ոչ օրինաչափ, տեղեկատվական հոսքերը ամբողջական չեն, պետական բյուջեի մասին օրենքով և եռամսյակային համամասնություններով նախատեսված ցուցանիշները շատ հաճախ շեղվում են ծրագրվածից: Այս պայմաններում խիստ կարևորվում է կանխատեսումներ իրականացնողի հստակությունը՝ ժամանակի յուրաքանչյուր պահի ճիշտ հաշվի առնել և համադրել զանձապետական միասնական հաշվի յուրաքանչյուր հոսքի առանձնահատկությունները և դրա վրա ազդող բոլոր գործոնները՝ ներկայացնելով հնարավորինս իրատեսական կանխատեսումներ:

Կանխատեսման բնագավառում առկա բացասական երևույթները իրենց արտացոլումն են գտնում դրամական հոսքերի ծրագրերի կատարողականներում: Գծապատկեր 1-ը ցույց է տալիս դրամական հոսքերի ծրագրով կանխատեսված զանձապետական միասնական հաշվի ամսվա վերջի մնացորդների նկատմամբ փաստացի մնացորդի շեղման տոկոսային մեծության դինամիկան 2004-2008թթ.: Ներկայացված 60 դեպքերից 41-ում զանձապետական միասնական հաշվի փաստացի մնացորդների շեղումը կանխատեսվածից փոքր է եղել 10%-ից:

Գծապատկեր 1

Գանձապետական միասնական հաշվի փաստացի մնացորդի շեղման տոկոսը կանխատեսման նկատմամբ



Կարծում ենք, որ դրամական հոսքերի կանխատեսումների նման մակարդակի պայմաններում դրամական հոսքերի ակտիվ կառավարումը, երբ զանձապետական միասնական հաշվի մնացորդը օրվա վերջում լինում է գրոյական կամ գրոյին մոտ, դեռևս հնարավոր չէ: Մինչև դրամական հոսքերի ակտիվ կառավարմանն անցնելը անհրաժեշտ է բարելավել դրամական հոսքերի ծրագրերի որակը, որոնց համար, օրինակ, 2008թ. տվյալներով տարեկան միջին 14.8% կամ 3.6 մլրդ դրամ բացարձակ շեղման պարագայում գրոյին մոտ մնացորդի կառավարմանն անցնելը հնարավոր չէ:

Կարծում ենք, որ Հայաստանի պարագայում կիրառելի չէ զանձապետական միասնական հաշվի հոսքերի կանխատեսումների համար որևէ մաթեմատիկական մոդել ներդնելու մոտեցումը: Նախ, դրա օգտին չի վկայում նաև միջազգային լավագույն փորձի ուսումնա-

սիրությունը, որից գալիս ենք այն եզրակացությամբ, որ դրամական հոսքերի լավագույն կանխատեսումները հիմնվում են նախորդ ժամանակահատվածի վիճակագրության ուսումնասիրության, տեղեկատվության արդյունավետ հավաքագրման և կանխատեսողների փորձի և հնտությունների վրա (Մեծ Բրիտանիա): Բացի այդ, մոդելների կիրառումը կարճաժամկետ ցուցանիշների համար, կարծում ենք, տեղին չէ մեր տնտեսական միջավայրում: Այն տնտեսությունում, որտեղ բարձր է ստվերային տնտեսության ծավալը, որտեղ հարկերի հավաքագրումը մեծապես կախված է վարչարարության խստացումից և աճում է, օրինակ ընտրություններից առաջ, մոդելների միջոցով կանխատեսումները կշեղվեն փաստացի ցուցանիշներից ավելի շատ, քան այժմ կատարվող կանխատեսումները:

Եթե պետական բյուջեի հարկային եկամուտները կանխատեսվեն որևէ մոդելի օգնությամբ, դրա հիմքում պետք է դրված լինի տվյալ հարկման բազան, որի համար ևս պետք է առկա լինի հիմնավոր կանխատեսումներ կարճ ժամկետների համար, ինչը նշանակում է լրացուցիչ մարմինների ներգրավում և լրացուցիչ ծախսերի առաջացում, որի արդարացված լինելու հավանականությունը շատ ցածր է: Մոդելների կիրառման համար անհրաժեշտ կլինեն նաև նախորդ ժամանակահատվածի հոսքերի օրինաչափությունների ավելի բարձր մակարդակ և տնտեսական կայունություն, քանի որ ճգնաժամերի պայմաններում, եթե նույնիսկ առկա են թվային շարքերի օրինաչափություններ, դրանք կարող են միանգամից ի չիք լինել:

Կարծում ենք, մեր պայմաններում կանխատեսումների որակը կարելի է բարձրացնել միայն տեղեկատվական հոսքերի ընդլայնման շնորհիվ: Մեր կարծիքով, ներկայումս գործող տեղեկատվության փոխանակման համակարգը բավականին թույլ է և չի պարտադրում բյուջեի կատարման գործընթացի մասնակիցներին պատասխանատու լինել կարճաժամկետ դրամական հոսքերի կանխատեսման համար և գիտակցել դրա նշանակությունը: Կարծում ենք, որ կարճ ժամկետի, մասնավորապես մեկ ամսվա համար շաբաթական բաշխվածքով բյուջեի եկամուտների կանխատեսման համար պետք է պատասխանատու լինի տվյալ եկամտի հավաքման պատասխանատու մարմինը: Նույն կերպ, բյուջետային ծախսերի կարճաժամկետ կանխատեսման համար պետք է պատասխանատու լինեն տվյալ տարվա բյուջեի մասին օրենքով սահմանված բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման մարմինները, այսինքն, բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչները կամ, ավելի պարզ, ծախսող նախարարությունները: Որովհետև, օրինակ, միայն հարկային մարմիններն են անձամբ շփվում հարկատուների հետ և կարող են բացահայտել տվյալ կարճ ժամկետի համար նրանց պարտավորությունը պետական բյուջեի հանդեպ, և միայն ծախսող նախարարությունը կարող է իմանալ, թե ինչ ընթացքի մեջ են իր կողմից կատարվող ծրագրերը, և որքան բյուջետային ֆինանսավորում կպահանջվի, օրինակ, առաջիկա ամսվա համար: